

ԿՐՕՆԱԿԱՆ-ԲԱՐՈՅՈՒԿԱՆ

«Եւ մատուցեալ առ նա փարիսեցիքն, փորձէին
զնա, եթէ արժան իցէ ումեք արձակել զին իւր
ըստ ամենայնի վնասու. » (Մատթ.
ԺԹ. 3-12, Մարկոս Ժ. 2-12):

Հրէաստանի որ մասում էլ որ Քրիստոսի վարդապե-
տութիւնը մի փոքր ընդհանուր բնաւորութիւն էր ստա-
նում, այնտեղ անպայման մենք փարիսեցիներ ենք տես-
նում, որոնք հետեւում են նրան, հսկում են, փորձում
են, աշխատում են նրան բռնել մի որ և է սխալ դատո-
ղութեան կամ վտանգաւոր վճիռ տալու մէջ։ Ասկայն
գոցէ նրանց նենգամիտ հնարադիտութիւնը ոչ մի ժա-
մանակ այնպիսի հարց չմտածեց, որ պատասխանը կապ-
ուած լինէր այնպիսի գծաւորութեանց հետ, որպիսին
էր ամուսնութեան լուծման համար Քրիստոսին նրանց
առաջարկած խնդիրը։ Ամենայն առիթ թոյլ է տալիս
մարդուն իւր կնոջը արձակել » (Մատթ. ԺԹ. 3-12,
Մարկ. Ժ. 2-12),

Այս հարցը տրուած էր գծուար ժամանակ շատ պատ-
ճառներով։ Նախ և առաջ Մովսիսի օրէնսդրութիւնը այս
հարցի վերաբերութեամբ արտայայտուած է երկդիմի
կերպով. որի պատճառով և այն ժամանակ աչքի ընկնող
նշանաւոր բարբոսներին երկու դասակարգերի մէջ այդ
հարցի մեկնաբանութեան վերաբերմամբ վճռական տար-
բերութիւն առաջ եկաւ։ Այդ դպրոցների տարբերու-
թիւնը կախուած էր իւր կողմից ժողովրդի սովորութեանց
տարբերութիւնից, վերջապէս աստուածաբանական, գի-
տական բարոյական և ժողովրդական դժուարութիւնները
բարդուցին քաղաքական կողմից, որովհետեւ իշխանու-
թիւնը, որին հպատակ էին, այդ հարցով շատ էր հետա-
բրբրւում և դրան տրուելիք պատասխանով, որն արդէն
մահուան պատժի էր դատապարտել մարգարէներէից մեծին

հայեացքի այն համարձակ արտայայտութեան համար, որը իւր սեպհական կենցաղավարութեան հակառակ և թշնամական երևաց։ Ինչպէս էլ որ Գալիլիայի կոյր բաբրիները իրանց ուսման մէջ դառնային, Յովհաննէս Մկրտիչը իւր կողմից այս հարցի մեկնաբանութեան և իւր ճշմարտասիրութեան ու անկեղծութեան համար իւր կեանքը զոհեց։

Մովսէսը օրէնք տուեց, որ երբ մարդ «կին առնի և ամուսնու մէջ յարգանք չը գտնի, որովհետեւ վերջինս ինչ որ հակառակ բան է գտնուի՝ (բառացի կերպով «մերկութեան գործի», — էրվաֆի դարար), այն ժամանակ թող գրի բաժանման վկայական և տալով նրան արձակի իւր տանից։ Եւ նա դուրս գալով ամուսնու տանից երթայ ուրիշ մարդու» (Նրկր, օր. «ԻԴ. 1, 2)։ Այս օրէնքի մեկնաբանութեան ժամանակ ամեն բան կախուած էր արտայայտուած, «էրվաֆի դարար» խօսքերի նշանակութիւնից կամ թէ միայն էրվաֆի նշանակութիւնից։ Ընդհանրապէս սա նշանակում է բիծ կամ պղծութիւն և Հիւլէյը իւր հետևողներով այս տեղը բացատրում էր այն մաքով, որ մարդը «կարող է տալ արձակման թուղթ ամենայն բանի համար, ինչ որ նա իւր կնոջ մէջ չի հաւանի», և նոյն իսկ, ինչպէս որ համարձակ կերպով արտայայտեց այս դպրոցին հետևող Ակիրա բաբունին — եթէ որ նա տեսաւ մի ուրիշ կնոջ, որը նրան աւելի է հաճելի լինում։ Ընդհակառակը Շամմայի դպրոցը մեկնում էր այդ այն մաքով, որ բաժանումն կարող է լինել միայն ամոթաբեր անհաւատարմութեան դէպքում։ Այս բանից հրէաները տեսած էին դարձրել. «Հիւլէյը քանդում էր, ինչ որ Շամմայն կապում էր»։

Շամմայն ճշմարիտ էր բարոյական տեսակէտից, բայց սխալ՝ մեկնաբանութեան մէջ։ Հիւլէյը ընդհակառակը ճշմարիտ էր մեկնաբանութեան մէջ, բայց սխալ բարոյական տեսակէտից։ Շամմայն ճշմարիտ էր միայն այնչափ, որքան նա տեսաւ, որ Մովսիսի օրէնսդրութիւնը չէր արդարացնում բաժանումն իղծի դատաստանի առաջ, բայց

ամենաստոր անբարոյական դէպքերից: Հիլէյը իւր դատողութեան մէջ միայն այն չափով ճշմարիտ էր, որ չափով որ նա տեսաւ, որ Մովսէսը թոյլ տուեց բաժանման կարելիութիւնը քաղաքական դատաստանի առաջ և առաւել նշանաւոր դէպքում քան անբարոյականութիւնը: Բայց այսպիսի դէպքերում վճիռ տալը յօգուտ մէկ դպրոցի ոչ միայն նշանակում էր մահացու վիրաւորանք հասցնել միւսին, այլ և միևնոյն ժամանակ—կամ բազմաթիւ՝ իրան հակառակորդ, ժողովրդի մէջ տարածուածների կատաղութիւնը դրդուել, կամ մի քանի բարոյականութեամբ քարձր կանգնած անձնաւորութեանց մէջ անբաւականութիւն առաջ բերել: Այդ մոլորեալ ժամանակում մեծամասնութիւնը ի հարկէ օրէնքի հիման վերայ էր գործում, որ տուել էր Գալիլէյը, որպէս և նոյն իսկ այսօր հրէաները շարունակում են գործել արեւելքում: Այն ժամանակուայ ընդհանուր սգին այդպէս էր: Հեթանոսական և առաւելապէս հռովմէական աշխարհում ամուսնական կապերը այնքան թուլացել էին, որ ինչպէս այն ժամանակ, որպէս և հասարակապետութեան նախընթաց ժամանակ, ամբողջ դարի ընթացքում միակ օրինակը ամենահեշտ լուծումն էր: Կայսրութեան ժամանակ բաժանումն արդէն օրէնք էր դարձել և ամուսնական հաւատարմութիւնը հաղուադէպ: Վերգելիոսի, Լուկրեցիոսի, Կոննելիոսի ժամանակներն անցան. եկաւ Յուլիոսի, Պոմպէոսի, Մետուրինի և Ագրիպպինի դարը, — այն դարը, երբ ինչպէս Սենեկան է ասում, կանայք իրանց տարիքը հաշուում էին ոչ թէ հիւպատոսութեան համեմատ, այլ իրանց բաժանումը ամուսինների թուով: Հրէաներն էլ փարակուեցին այս ամօթալի օրինակով, և որովհետեւ բազմակնութիւնը սովորութիւնից դուրս եկաւ, այն ժամանակ նրանք այդ գործ էին անում շատ հեշտութեամբ արձակելով մէկ կնոջ և վերցնելով ուրիշին: Նոյն իսկ Յովսէփ Փլաբիանոսը, որ փարիսեցուց էլ փարիսեցի էր, որը ամեն յաջող դէպքում իրան ներկայացնում էր իբրեւ ամենախիստ և կրօնասէր մարդ, առանց ամենաշնչին պատճառի, ինքնա-

վոտահուլթեամբ պատմում է, որ իւր առաջին կինը թողեց իրան, երկրորդից ինքը բաժանուեց, նրանցից երեք զուակ ունենալուց յետոյ, և ապա ամուսնացաւ երրորդի հետ: Եթէ Փրկիչը վճռէր յօգուտ Շամմայի դպրոցի (իսկ նրա առաջին վարդապետութիւնը փարիսեցիներին հարկադրում էր մտածելու, որ նա հէնց այդպէս էլ կ'վճռէ հարցը), այն ժամանակ նա հրապարակապէս արտայայտած կլինէր այն կարծիքը, որ Հերովդէս Ինտիպոսը կրկնակի շնացել էր, պոռնկաբար ամուսնանալով պոռնկացած կնոջ հետ:

Բայց Քրիստոս իւր պատասխանների ժամանակ չէր առաջնորդւում քաղաքական հաշիւներով, և բոլորովին անտարբեր էր թէ բազմութեան կատաղութեանը և թէ բռնակալի բարկութեանը: Նրա նպատակն էր տալ իրան նենդամիտ հարց առաջարկողներին պատասխաններ, որոնք կարողանային նրանց աւելի բարձր շրջանները զննութեան կոչել: Նրանց սեպհական հարցի մէջ, «Թոյլատրելի է», եթէ միայն հարցը անկեղծ էր, արդէն պատասխանը ևս պարունակւում էր: Այն բանը թոյլատրելի չէ, որի թոյլտւութեան մէջ ինքը կասկածում է: Այդ պատճառով փոխանակ պատասխանելու, Քրիստոս նրանց ուղղում է դէպի այն աղբիւրը, որտեղ կարելի է ճշմարիտ պատասխանը գտնել: Նախնական Մովսիսական օրէնագրութեան հետ համեմատութեան մէջ գնելով և պատասխանելով նրանց «Թոյլատրելի է», հարցին հակառակ հարցով, «Չէ՞ք կարգացել արդեօք», նա յիշեցնում է նրանց, որ Աստուած սկզբում մարդուն և կնոջը ստեղծելով, նրանով հէնց իւր կամքն արտայայտեց, որ ամուսնութիւնը պիտի լինի ամենասերտը և ամենաանբաժանելին, բոլոր միւս կապերից գերազանցողը և նոյն իսկ եթէ հարկաւոր է փոխարինողը մնացածներին:

«Ի՞նչպէս», հարցնում են նրանք, աշխատելով նրան բռնել օրէնքի ընդդիմութեան մէջ, «Մովսէսը պատուիրեց արձակման թուղթ տալ և բաժանուել կնոջից», նրանց հարցի ձեւը իւր մէջ պարունակում էր մէկը այն կեղծ

դարձուածներից, որոնք տառն են կրկնադողներ ժողովորական է։ Եւ այս կեղծ դարձուածքի վերայ նրանք հիմնուած էին աղաւաղուած շինութիւնը իրանց կեղծ ապացոյցների։ Քրիստոս նրանց միանգամից պատահանեց, «Մովսէսը ձեր խտտասրտութեան պատճառով թոյլ տուեց ձեզ բաժանուելու կնոջից, բայց սկզբումը այդպէս չէր», և յետոյ, թէեւ չյիշելով անունը, նա արտայայտուած է աներկիւղ կերպով դատաստանը Հերովդէս Անտիպոսի յանցանքի—այնպիսի պարզութեամբ, որպիսին մարդկային լեզուին մատչելի է. «ով որ իւր կնոջից կբաժանուի ոչ շնութեան համար և կամուսնանայ ուրիշի հետ, այդպիսինը ինքը շնանում է և ամուսնանալով ամուսնուց բաժանուած կնոջ հետ՝ դարձեալ շնանում է»։ Իսկ Հերովդէսի յանցանքն ամենավատ օրինակն էր երկու տեսակ շնութեան, որովհետեւ նա ամուսնացած լինելով անմեղ և իր դեռ ևս անբաժան կնոջ հետ, ամուսնացաւ պոռնիկ, բայց նոյնպէս անբաժան Հերովդէս Փիլիպպոսի կնոջ հետ, իւր սեպհական եղբօր և հիւրընկալ տանտիրոջ։ Եւ միևնոյն ժամանակ այո արաւ նա առանց օրէէ մեղադուելի առթի ստուերով, սոսկ յանցաւոր ցանկութեամբ, թէեւ երկտասարգական ցանկութեանց շրջանը նրա կեանքի, ինչպէս և իւր սերեկանի կեանքի՝ արդէն վաղուց անցել էին։

Եթէ այժմ վարիսեցիները ուղենային օգտուել այս դէպքով, այն ժամանակ կարող էին Յիսուսին Անտիպոսի հետ ընդհարման մէջ ձգել և Յովհաննիսի վիճակը նրա գլխին ևս բերել։ Միևնոյն ժամանակ կարող էր Հիլլէյլի դպրոցը աւելի զինուել նրա դէմ, նմանապէս և Շամմային, որովհետեւ նա նրանց մեղադրում էր մոլորութեան մէջ, որ Հիլլէյլի դպրոցը մէջ յառաջ էր դալիս բարոյական նրբամտութեան պակասութիւնից, իսկ Շամմայի դպրոցի մէջ՝ մեկնութեան ճշտութեան պակասութիւնից։ Մինչդեռ նա միանգամ ևս լուսոյ մի հեղեղ սփռեց Մովսիսի օրէնսդրութեան դժուար մասի վերայ, ցոյց տալով, որ հէնց այդ օրէնսդրութիւնը պայմանական է և ոչ

Թէ կատարեալ, ժամանակաւոր է և ոչ յաւիտենական։ Այն, ինչ որ հրէաներն իրանց յայտնի Գալլէյլին հետեւելով աստուածային օրէնք էին հաշոււմ, որով պարծենալ կարելի էր, ընդհակառակը միայն համբերելի չարիք էր, որ միայն արտաքին աշխարհոււմ էր թոյլատրոււմ, բայց ոչ լուսաւորեալ խղճի և մաքուր սրտի խորքոււմ, — իսկապէս նրանց կոպիտ և յանցաւոր գրուածեան ապացոյց էր։

Քրիստոսի տուած պատասխանով շրջակուած և շփոթուած լինելով, սովորաբար ամօթահար փարիսեցիները իրանց տեսան կրկին անգամ ամենաբարձր իմաստութեան և անսահման հրաշալի նրբամտութեան առաջ, քան թէ իրանք ունէին։ Այդ պատճառով էլ նրանք հեռացան, որպէս զի նոր որոգայթ որոնեն — համահաւասար չոր և համահաւասար անպտուղ։ Սակայն ոչինչ այնպէս պարզ չէ ցոյց տալիս Քրիստոսի վարդապետութեան կարիքը քան այն, որ նոյն իսկ իւր աշակերտները շփոթուած և ճնշուած էին։ Այն անբարոյական դարոււմ, երբ մոլորեցնելը այնքան ընդհանուր էր, երբ Հռովմոււմ ամուսնութիւնը այդպիսի մի արհամարհանքի մէջ էր և այնքան սովորութիւնից դուրս եկաւ, որ նոյն իսկ օրէնք հարկաւորուեց, որի հիման վերայ ամուրիները տուգանքի էին ենթարկուոււմ, աշակերտները Քրիստոսի վարդապետութեան մաքուր խստութիւնը հասկացան այն մըտքով, որ ամուրի մնալը նրա հիման վերայ աւելի բարձր և լաւ է։ Այսպիսի կարծիք նրանք արտայայտեցին, երբ որ նրա հետ տանն էին արդէն։ Ի՞նչպիսի ճակատագրական հարուած հասցրած պիտի լինէր Քրիստոս աշխարհի բազմին և մարդկութեան բարոյականութեան, եթէ աշակերտների բոլորեալ այն որոշման հետ համաձայնուէր։ Նրա աստուածութեան ի՞նչպիսի հրաշալի ապացոյց է գտնոււմ այն բանի մէջ, որ այն ժամանակ, երբ նոյն իսկ նրանց ամենալաւերի և մեծամեծների մէջ այսպիսի բարոյական ուսուցիչ չկար, որը չարտայայտէր կամ չգովէր դոնէ մէկ վտանգաւոր և մահացուցիչ մոլորութիւն, որ ընդունակ է թունաւորել կեանքը կամ ժողովրդի հանգստութիւնը, —

Փրկիչ Յիսուսի ամբողջ վարդապետութիւնը Նրա իւրաքանչիւր խօսքի մէջ սուրբ է և աստուածապէս կենդանի։ Եւր պատասխանի մէջ Նա ամուրիութեանը ոչ մի առաւելութիւն չի տալիս, որը շատ բարձր կգնահատուէր անապատականների և կուսակրօնների կողմից և միլիոնաւոր ժողովրդի խիղճը կշփոթէր, որոնց կսպը օրհնուած է յերկնաւստ Բոլորը, ինչ որ Նա ասաց, այն է, որ Նրանց չկամութիւնը ամուսնութեան ոչ մի անպայման նշանակութիւն չունի, որ ամուրիութիւնը անկարելի է և ցանկալի չէ ամենքի համար, նա միայն շատ քչերի և բացառիկ անձնաւորութեանց համար է։ Կան այնպիսիք, որոնք անպէտք են ամուսնական կեանքի համար իրանց ծննդեան հանգամանքների կամ կազմակերպութեան պատճառով, ուրիշները անվայելուչ կամ տգեղ, բայց միևնոյն ժամանակ սովորական, ամենայն տեղ տիրող գերութեան զօրութեան տանջանքների և խստութեանց պատճառով, վերջապէս ոմանք էլ հրաժարոււմ էին ամուսնութեան վերաբերեալ ամեն տեսակ մտքերից կրօնական նպատակով և կամ բարձր կարիքների պահանջմանց պատճառով։ Ոմանց պարտքն է ամուսնանալ և այնպէս ծառայել Աստուծուն, ուրիշների պարտքն է գուցէ չամուսնանալ և ամուրի ծառայել Աստուծուն։ Քրիստոսի խօսքերի մէջ չկայ այն դժուարութիւնը և անորոշութիւնը, որ ուրիշները տեսնում են Նրա մէջ։ Նրա վարդապետութեան ամենալաւ բացատրութիւնը գտնուում է Կորնթացոյ թղթի Է. և Թ. գլուխներում։ Նրա միաքը երեւի այն է, որ ամուսնութեան համար բնական անկարողների հազուադէպ բացառութեամբ կան մարդիկ (և սրանք շատ քիչ և հէնց աշակերտների խօսքը սրանց է վերաբերում), որոնք կարող են այն համոզումն ունենալ կամ այն համոզման վերայ հաստատ մնալ, որ որոշ ժամանակ, առանձին հանգամանքների կամ բացառիկ պարտաւորութեանց պահանջման պատճառով, նրանց համար լաւ է և խելօք է ամուսնութիւնից հրաժարուելը, որովհետեւ նրանք Աստուածանից ողջախոհութեան շնորք են ստացել, ժուժկալ կեանքի կա-

բողութիւն, որ մաքուր սրտից է յառաջ գալիս, որ կոչմամբ առանձին ծառայութեան համար բաժրացրուած է:

Ապա, իբրև սրտաշարժ և գեղեցիկ բացատրութիւն այս վսեմ ուսուցման, որպէս ապացոյց այն բանի, որ Քրիստոսի վարդապետութեամբ ամուսնութիւնը սուրբ է և անկողինը անբիծ, հետևեց մի տեսարան, որը գիւթել կամ հմայել էր յաջորդ դարերի բոլոր գեղարուեստների և բանաստեղծների երևակայութիւնը:

Ամուսնութեան քաջալերութիւն պէտք է համարել և այն, որ Փրկիչը իւր երկրաւոր կեանքի վերջն էլ ցանկացաւ գգուել երեխաներին իւր ձեռների վերայ: Պերէում հաւանականօրէն գիտէին, որ Նրա հեռանալու ժամանակը մօտեցել է: Գուցէ զգալով հենց նոր արտայայտած Նրա խօսքերի ներքին իմաստը, հայրեր, մայրեր և բարեկամները բերում էին Նրա մօտ սուրբ կապի պտուղները — երեխաներին և նոյնիսկ բերում էին շատ փոքրիկներին՝ մանուկներին, (Մատթ. ԺԹ. 13, Ղուկ. ԺԸ. 15), որպէսզի նրանց մօտենայ և օրհնի: Նախքան նրանցից բաժանուիլը, նրանք կամենում էին փառաւոր կերպով նրանից բաժանուիլ, նրանք կամենում էին ստանալ, այսպէս ասած, իրանց ապագայ սերունդների համար Նրա օրհնութեան կտակը: Աշակերտները նրանց վարմունքի ձևը ձանձրացուցիչ և անվայել համարեցին: Նրանք չէին ուզում՝ որ իրանց վարդապետին այդպէս նեղացնէ հասարակ ժողովուրդը, և նրանց անհաճոյ էր, որ միշտ նրանց վսեմ խօսակցութիւնը ընդհատուում էր: Նրանք ատում էին որ այստեղ հասարակ կանանց և երեխաների խումբը խռնւում էր, հեռացնելով գուցէ աւելի հարկաւոր անձնաւորութիւններ և ուրիշ հարկաւոր գործեր: Հին ժամանակները կանայք այնպիսի յարգանք և երեխաները այնպիսի սէր չէին վայելում, ինչպէս այժմ: Նրանց չէր շրջապատում քնքշութեամբ սիրող արծիւը, ընդհակառակը յաճախ նրանք կատարեալ ատելութեան մէջ էին գտնուում, և ամօթալի խօսութեանց ենթարկւում: Բայց նա, որ եկել էր մեղաւորների բարեկամ լինելու, բոլոր տանջ-

ւողների և հիւանդների լուծը թեթեւացնելու, եկել էր նմանապէս բարձրացնելու կնոջը իրան վայել յարգանքի աստիճանին և դառնալ պաշտպան և բարեկամ՝ անօգնական մանկութեան և անմեղ երեխայութեան։ Նոյն իսկ նորածին երեխայք մկրտութեամբ Նրա եկեղեցին պիտի մտնէին, որպէս զի դառնան անդամ՝ Նրա մարմնի և ժառանգ Նրա թագաւորութեան։ Աշակերտների կողմից ցոյց տրուած արհամարհանքը Նա դարձրեց իրանց՝ «թոյլ տուէք», ասաց Նա այդ խօսքերով, որը իւրաքանչիւր համատես աւետարան պահպանել է մեզ համար իրան անմահ քնքշութեան մէջ.— «Թոյլ տուք մանկտույդ գալ առ իս, զի այդպիսեացդ է արքայութիւն Աստուծոյ»։ Եւ գգուելով երեխաներին, Փրկիչը ձեռքը դրեց նրանց վերայ, օրհնեց և ապա կրկին անգամ աւելացրեց յիշողութեան մէջ միշտ կարեւոր՝ ուստի և յաճախ կրկնւող Նրա ներշնչումն։ «Որ ոչ ընկալցի զարքայութիւնն Աստուծոյ իբրեւ զմանուկս զայս, ոչ կարէ մտանել յարքայութիւն Աստուծոյ»։ (Համ. Մարկ. Թ. 35. Ղուկ. Իբ. 24. Մատթ. Ի. 26. 27. ԻԴ. 11)։

Ռուս. թարգմ.

Առաւի վարդապետ.

